ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/28

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Աբելյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 264.110.1093364)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.01.2020թ. թիվ 26/26-1/807-2020 գրությամբ «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի 21.01.2020թ. թիվ Մ.Գ./02-08/20 գրության հիման վրա, 23.01.2020թ. թիվ 26/26-1/807-2020 գրությամբ նախաձեռնել է «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 01.02.2020թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը հայտ է ներկայացրել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից 18.11.2019թ. կազմակերպված «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) և ճանաչվել է հաղթող մասնակից: Ընկերությունը 16.12.2019թ. ստացել է պայմանագիր կնքելու առաջարկն ու նախագիծը:

Պայմանագրի կնքման վերջնաժամկետն եղել է 27.12.2019թ.:

Պայմանագիրն Ընկերության կողմից ստորագրված և կնքված «Հայփոստ» ՓԲԸ մուտք է արվել 27.12.2019թ. (կից ներկայացվել է «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված կտրոնի պատճենը):

Ընկերությունը խնդրել է դադարեցնել վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը, քանի որ վերոնշյալ պայմանագրի կնքման վերաբերյալ Ընկերության կողմից չի խախտվել որևէ կետ և ժամկետների սահմաններում ներկայացրել է պայմանագիրը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/28 ընթացակարգի շրջանակներում 03.02.2020թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.01.2020թ. թիվ Մ.Գ./02-

02/20 և 21.01.2020թ. թիվ Մ.Գ./02-08/20 գրություններով հայտնել է, որ Պատվիրատուի կարիքների համար գրենական ապրանքների ձեռքբերման նպատակով 20.11.2019թ. հայտարարվել է «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2019թ. գնահատման նիստում, մասնակից «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչվել է ընտրված:

Պատվիրատուն, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը, 16.12.2019թ. ծանուցել է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Սակայն Ընկերությունը խախտել է Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/28 ընթացակարգի շրջանակներում 03.02.2020թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/28 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/28 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին 16.12.2019թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.01.2020թ. թիվ 26/26-1/807-2020 գրությունը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի 10.01.2020թ. թիվ Մ.Գ./02-02/20 և 21.01.2020թ. թիվ Մ.Գ./02-08/20 գրությունները և կից փաստաթղթերը, «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ի 01.02.2020թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.12.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին 16.12.2019թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

30.12.2019թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չկայացած համարելու մասին հայտարարություն, որի համաձայն պայմանագիր չի կնքվել:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն 10.01.2020թ. թիվ Մ.Գ./02-02/20 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Այս տեսանկյունից Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում՝ պայմանագիր կնքելու առաջարկը 16.12.2019թ. ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրված և կնքված պայմանագիրը 27.12.2019թ. հանձնել է «Հայփոստ» ՓԲԸ-ին: Ընկերությունը կցել է «Հայփոստ» ՓԲԸ-ի N 3619 առաքանու անդորրագիր, որի համաձայն՝ «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ն 27.12.2019թ. նամակ է ուղարկել ք. Երևան, Գ.Հովսեփյան 26 հասցեում գտնվող «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին:

Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 05.02.2020թ. թիվ Ա.Հ./03-31/20 գրությամբ հայտնել է, որ «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ի և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջև ստորագրված պայմանագիրը «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի ընդհանուր բաժին մուտքագրվել է սույն թվականի հունվարի 10-ին:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությանը կցել է նաև փոստային ծրարը, որի վրա առկա է 27.12.2019 ամսաթվի նշումով «Հայփոստ» ՓԲԸ-ի կնիք:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ **10 աշխատանքային օրվա ընթացքում**, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա

զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկն ուղարկվել է 16.12.2019թ.: Ուսումնասիրելով գործում առկա նյութերն արձանագրում եմ, որ Ընկերությունը Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետում՝ 27.12.2019թ. կապի կազմակերպությանը հանձնել է ստորագրված պայմանագիրը, որը սակայն Պատվիրատուի կողմից ստացվել է սահմանված ժամկետն ավարտվելուց հետո: Նման պայմաններում, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում և առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը որպես ընտրված մասնակից չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.01.2020թ. թիվ 26/26-1/807-2020 գրությամբ «Փեյփր Հաուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**